

Ալվարդ Ս. Ղազիյան
բան. գիտ. թեկնածու
Լիլիթ Է. Սյրտունյան

ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՑ ՀՈԳԵՎՈՐ ԳԱՆՁԵՐԻ ՓՐԿՈՒԹՅԱՆ ՀԵՐՈՍԱԿԱՆ ՓՈՐՁԸ

Երվանդ Լալայանի արշավախմբի գործունեության մասին (1915թ.
սեպտեմբեր - 1916 թ. մարտ)*

1915 թ. արհավիրքի օրերին իր բնօրրանում դարերով ապրող տոհմիկ ժողովրդին ֆիզիկապես բնաջնջող Թուրքիայի կառավարիչների նպատակներից մեկը հայկական հնագույն մշակույթի գանձերի ոչնչացումն էր: Պատերազմի ընթացքում հարյուրավոր հայկական գյուղեր բնաջնջվեցին, թալանվեցին, հազարավոր հայ բնակիչներ իրենց օջախներում, եկեղեցիներում սրածվեցին, կենդանի-կենդանի այրվեցին ու մոխրացան. թվում էր, թե հայ մարդկանց ոչնչացնելու հետ միասին իսպառ վերանալու է նաև նրանց հոգևոր հարստությունը:

Վերհիշելով այդ դառնադեմ օրերը՝ Սիմոն Վրացյանը հետագայում գրում է. «Դարերով կուտակված անհաշիվ հարստություն, տնտեսական ու մշակութային թանկագին նյութեր կորստյան մատնվեցին: Մի ամբողջ քաղաքակիրթ ժողովուրդ խաչհանվեց ու նահատակվեց վայրագորեն՝ աշխարհի աչքի առջև. ոչ ոք չըմբոստացավ ու չմիջամտեց: Եվ ո՞վ կարող էր, ո՞վ սիրտ ու կամք ուներ միջամտելու. երկրագունդը խեղդվում էր արյան մեջ: Մարդկության խիղճը քար էր կտրել...»¹:

Արևմտյան Հայաստանի այն բնակավայրերի ու գավառների բնակիչները, ովքեր փոքրիշատե կարողացել էին դիմադրել, մասամբ փրկվել էին: Նրանք ապաստանել էին Անդրկովկասի հայաբնակ քաղաքներում ու գյուղերում: Մոտավոր հաշվարկներով 1916 թ. գարնանը փրկվածների թիվը հասնում էր 240.000 մարդու²:

Այդ ծանր օրերին հայ նշանավոր ազգագրագետ-բանահավաք, հնագետ, մանկավարժ և հասարակական գործիչ Երվանդ Լալայանը, քաջ գիտակցելով

* Հոդվածն ընդունվել է տպագրության 25.02.2010:

1 Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 12:

2 Տե՛ս Ջ. Կիրակոսյան, Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, Եր., 1988, էջ 43:

օրհասի մեջ հայտնված Արևմտյան Հայաստանի հայության հոգևոր հարստության արժեքն ու նշանակությունը՝ ազգային ինքնության պահպանման տեսանկյունից, որոշում է հայ փախստականներից գրի առնել այն ամենը, ինչը դեռևս կենդանի է նրանց հիշողության ծալքերում: Եվրոպական ուսումնառության մասնագիտական հիմնավոր դպրոց անցած, հայ ժողովրդի հոգևոր մշակույթին քաջածանոթ Երվանդ Լալայանը շատ արագ կողմնորոշվեց, որ Արևմտահայաստանից բռնագաղթված փախստականները փրկել են ոչ միայն իրենց ֆիզիկական գոյությունը, այլև այն հոգևոր արժեքները, որոնցով իմաստավորվել էր մեր նախնիների կյանքը դարերի ընթացքում և փոխանցվել սերնդեսերունդ: Փախստականների հոսքը դեռ չէր ավարտվել, երբ նա «Հայոց ազգագրական ընկերության» անունից 1915 թ. սեպտեմբերի 16-ին դիմեց «Կովկասի հայոց բարեգործական ընկերությանը» կից «Հայ փախստականներին օգնող կենտրոնական կոմիտեին»՝ հետևյալ խնդրանքով.



Երվանդ Լալայան

«Հայոց ազգագրական ընկերությունը «Հայ փախստականներին օգնող կենտրոնական կոմիտեին»³

Թիֆլիս, 16 սեպտեմբերի, 1915 թ.

Խորհուրդս օգտվելով այն հանգամանքից, որ Նպաստամատույց ընկերությունը ցանկանում էր նյութականապես նպաստել հայ փախստական մտավորականներին, առաջարկեց նրան, որ նրանց բաշխվելիք գումարը դնել յուր տրամադրության ներքո՝ այդ մտավորականներից արշավախմբեր կազմելու հայ փախստականներից, մասնավորապես հայ բանահյուսության և ընդհանրապես հայ ազգագրության վերաբերյալ նյութեր հավաքելու, որով թե այդ մտավորականները ո՛չ իբր ողորմություն, այլ իբր արդար վարձատրություն՝ միջոց կստանան ապրելու, և թե հայ բանահյուսության անգնահատելի նշխարները կազատվեն վերջնական կորստից: Նպաստամատույց ընկերությունը

ԻԿ(Ը) տարի, թիվ 1(29), հունվար-մարտ 2010

3 Երվանդ Ալեքսանդրի Լալայանը ծնվել է 1864 թ. մարտի 13-ին, Ալեքսանդրապոլում (Գյումրի): Նախնական կրթություն ստացել է տեղում, ապա ընդունվել Թիֆլիսի Ներսիսյան դպրոց և 1885 թ. ավարտել այն: 1890 թ. կնոջ՝ Հայկանուշի հետ մեկնում է ժնև, ուսանում ժնևի համալսարանի հասարակագիտության բաժնում, որն ավարտում է 1894 թ. ստանալով սոցիալական գիտությունների թեկնածուի աստիճան: Նա ավարտում է նաև Լոնդոնի համալսարանին կից մանկավարժության դասընթացը՝ ստանալով մանկավարժի որակավորում: Այնուհետև ընտրվում է Փարիզի Մարդաբանական դպրոցի թղթակից անդամ, ապա՝ Փարիզի ժողովրդական ավանդությունների ընկերության գործոն անդամ: Լալայանի վերադարձն Անդրկովկաս նշանավորվում է «Ազգագրական հանդեսի» լույս ընծայմամբ (Շուշի, 1897): «Ազգագրական հանդեսը» հրատարակվում է 20 տարի՝ 26 գրքով՝ համախմբելով իր շուրջը ժամանակի լավագույն գրական-գիտական ուժերը: Ե. Լալայանի «Նոր Բայազետի գավառ» աշխատությունն արժանացել է Դուկասյան մրցանակի, իսկ «Գանձակի գավառը»՝ Սահակ-Մեսրոպյան մրցանակի: «Ազգագրական հանդեսում» հրատարակած նյութերից բացի Լալայանը մի շարք աշխատություններ ու ժողովածուներ է հրատարակել առանձին գրքերով՝ «Ջավախքի բուրմունք» (Թիֆլիս, 1892), «Ժողովրդական առակներ», Ա գիրք, Հոբոս (Թիֆլիս, 1903), Բ. գիրք, Սուլա Նասր-Էդ-Դին (Թիֆլիս, 1903), «Պառավաշունչ» (Թիֆլիս, 1911), «Մարգարիտներ հայ բանահյուսության» (հ. 1-3, Վաղարշապատ, 1914 - 1915): 1900 թ. Լալայանի ջանքերով Թիֆլիսում հիմնադրվեց Ազգագրական-հրատարակչական ընկերությունը (1906թ. այն վերանվանվեց Հայոց ազգագրական ընկերություն), որը հսկայական գործ կատարեց՝ ստեղծելով թանգարան, ուր կարևոր տեղ էին գրավում Լալայանի հավաքած և պեղած նյութերը: Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո Լալայանի ջանքերով թանգարանը փոխադրվեց Երևան, նրա հիմքի վրա կազմակերպվեց Հայաստանի պատմության պետական թանգարանը: Ե. Լալայանը վախճանվեց 1931 թ. փետրվարի 24 -ին, Երևանում:

ՎԵՄ համահայկական համոզանք

սիրով ընդունեց այս առաջարկը, և արդեն ճանապարհ է ընկնում մի արշավախումբ՝ յոթ հոգուց բաղկացած:

Եվ, որովհետև, անհրաժեշտ է նաև կորստից ազատել հայ փախստականների բերած բազմաթիվ հնությունները, ասեղնագործ և տիպական գործվածքները, տարազները, ձեռագրերը և այլն, Խորհուրդս կարծում է, որ այդ խեղճերին նույնպես նպաստած կլինենք, եթե թույլ չտանք վաշխառուներին այդ բանում ևս կեղեքելու նրանց, այլ մենք առնենք իրենց իսկական գներով և դարձնենք ազգային սեփականություն:

Եվ, որովհետև, ներկա սոսկալի աղետը մեր բոլոր բարերարների ուշադրությունը կենտրոնացրել է այդ թշվառներին օգնություն հասցնելու խնդրի վրա, և ազգային կուլտուրական բոլոր գործերը մնացել են բաց, ուստի և Խորհուրդս չունենալով սեփական միջոցներ, դիմում է Ձեզ, խնդրելով մի որոշ գումար դնել մեր տրամադրության տակ՝ վերոհիշյալ կերպով նպաստելու փախստականներին:

Նախագահ՝ Ն. Մելիքյան
Անդամ քարտ.՝ Ե. Լալայան»⁴:

Արևմտահայ գաղթականներից հավաքված բանահյուսական նյութերի, մասնավորապես հեքիաթների գրառման ամսաթվերը վկայում են, որ Ե. Լալայանի կազմակերպած և ղեկավարած արշավախումբն սկսել է գործել 1915 թ. սեպտեմբերի 22-ից, այսինքն՝ դիմումը գրելուց անմիջապես հետո: Արշավախմբի անդամները եղել են բացառապես արևմտահայ մտավորականներ՝ **Արտաշես Բարսեղյան, Նազարեթ Մարտիրոսյան (Մուշ), Շահեն Կուժիկյան (Շատախ), Սենեքերիմ Շալճյան, Երվանդ Պեգազյան, Եղիշե Վարդանյան, Մարտիրոս Գաբաղյան-Վեսպեր (Վան)**: Գործը ղեկավարել է Երվանդ Լալայանը, բայց միաժամանակ նա անձամբ մասնակցել է հավաքչական աշխատանքներին:

Արշավախմբի յուրաքանչյուր անդամ աշխատել է այն շրջանում, որտեղ հանգրվանել էին իր հայրենակիցները, այսինքն՝ յուրաքանչյուր բանահավաք քաջածանոթ էր ասացողի բարբառին (խոսվածքին), բնաաշխարհագրական միջավայրին: Արշավախումբը գործել է կես տարի (1915 թ. սեպտեմբերից-1916 թ. մարտ): Այդ ժամանակամիջոցում բանահյուսական նյութեր է գրառել Թիֆլիսում, Երևանում, Ալեքսանդրապոլում (Գյումրի), Մեծ Ղարաքիլիսայում (Վանաձոր) և Էջմիածնում: Ըստ բանասացների ծագման բնօրրանի, որը և գրառված նյութի ծագման հայրենիքն է, արշավախմբի հավաքած հոգևոր գանձերը ներկայացնում են Արևմտյան Հայաստանի բոլոր ազգագրական մեծ ու փոքր շրջաններն իրենց բնակավայրերով՝ Վան-Վասպուրական, Ռշտունիք ու Շատախ, Մոկս, Մուշ-Տարոն, Հարք-Բուլանըխ, Ալաշկերտ, Բասեն, Բիթլիս: Բնակավայրերի համայնապատկերը կարող է ներկայացնել Արևմտյան Հայաստանի յուրահատուկ քարտեզը: Բանահյուսական նյութեր են գրառվել Արևմտյան Հայաստանի 70 գյուղերի և 5 քաղաքների նախկին բնակիչներից՝ **Վան, Մուշ, Բաղեշ, Մանազկերտ, Մոկս քաղաքներ, Կոփ, Փիոնք, Վարդենիս, Արտոնք, Լեզք, Նարեկ, Արճակ, Հարատենց, Կուռուբաշ, Կծվակ, Կաղպի, Սակ, Կաճեթ, Թաղ** և այլն: Բոլոր բնակավայրերը թվարկելն անհիմաստ է, բայց

4 «Բանբեր Հայաստանի արխիվների», 1963, № 1, էջ 130:

կորուստների ահեղության մասին պատկերացում կազմելու համար նշենք հետևյալը. Ռշտունիքի ավելի քան 26 հայկական գյուղերից⁵ 22-ն ընդգրկվել են արշավախմբի գործունեության շրջանակներում: Գրառվել է 51 միավոր հեքիաթ՝ տասներկու բանասացներից: Ե. Լալայանի արշավախմբին հաջողվել է Արևմտյան Հայաստանից բռնագաղթված ավելի քան 250 բնակիչներից գրառել 800 միավոր հեքիաթ, ինչպես նաև բանահյուսական տարբեր ժանրերի նյութեր՝ **գրույց, ավանդություն, առակներ, երգեր, հանելուկներ**, բանաձևային բանահյուսության մնուշներ՝ **անեծքներ-օրհնանքներ**, հայկական հերոսական էպոսի **պատումներ**⁶ և այլն:

Ե. Լալայանի խմբարշավի գրի առած բանավոր նյութերի դիտարկումը հանգեցնում է այն եզրակացությանը, որ գործ ունենք հայագիտության մի շատ կարևոր բնագավառի՝ բանահյուսական հարստության հետ: Արշավախմբի հավաքած հեքիաթները և այլ ժանրերի նյութերը գրի են առնվել արևմտահայ բարբառներով: Եվ երբ չկա բնօրրանը, չկա բարբառով հաղորդակցվող հանրությունը, բարբառը դադարում է ապրելուց և իր գործառույթը կատարելուց: Ուստի, հայագիտության համար միակ աղբյուրը և բարբառի գոյության վկան մնում է հեքիաթը: Նույնը վերաբերում է բնասաշխարհագրական միջավայրին: Թուրքերը, տիրանալով Արևմտյան Հայաստանին, փորձեցին բնիկ հայ բնակչությանը ոչնչացնելու միջոցով յուրացնել երկրի պատմամշակութային հուշարձանները նախ և առաջ, անվանավոխության՝ թուրքացման միջոցով. ամենաբնորոշ օրինակն Արարատ լեռան անվանավոխությունն է՝ Աղրիդաղ: Երվանդ Լալայանի արշավախմբի տվյալները՝ իրենց ճշգրիտ անվանումներով, վկայում ու հաստատում են այդ բնակավայրերի անունների հայկական լինելը՝ **Նոր գյուղ, Գետաշեն, Վարդենիս, Կենդանանց, Հարսնեքար, Լեզբ և այլն:**

Ե. Լալայանի արշավախմբի նյութերին կից տրվող ծանոթագրությունները բացառիկ արժեք ունեն ազգային հոգեբանության, հայ մարդու հակումների, բարոյական չափանիշների և համակեցության ուսումնասիրության համար: Բանասացների մասին տվյալները վկայում են, որ հիշողության մեջ պահպանված նյութը, տվյալ պարագայում՝ հեքիաթը, նրանք սովորել են տեղում, իրենց բնօրրանում, մոտ հարազատներից: Այսինքն՝ հեքիաթը ստեղծվել, արմատավորվել և կենցաղավարել է բնական միջավայրում: Այն բավարարել է լսողների ոչ միայն գեղարվեստական պահանջմունքն ու ճաշակը, այլև արտահայտել արդար, բարեկեցիկ, ազատ և ապահով կյանքի վերաբերյալ նրանց երազանքը:

Ավելին, եթե գյուղական, ինչու չէ նաև՝ քաղաքային միջավայրում ունկնդիրները մինչև ավարտն ականջալուր են լինում 10 տպագիր թերթից կազմված հեքիաթին, նշանակում է նրա սյուժեն ընդգրկում է այնպիսի մոտիվներ, դրվագներ, որ հոգեհարազատ են նրանց: Խլաթի գավառի Կժվակ գյուղից բանասաց Խուդրաթ Սարգսյանը պատմել է 11 հեքիաթ: Տնից, հայրենիքից արտաքսված, հարազատներից զրկված 45-ամյա այդ կինը հոգեկան ինչ կարողություն և ուժ, ինչ հիշողություն, պատմելու ինչպիսի՝ ընդունակություն պետք է ունենար, որպեսզի կարողանար մի օրում (1915 թ. նոյեմբերի 4)

5 Տե՛ս Հայկական սովետական հանրագիտարան, հ. 9, Եր., 1983, էջ 683:

6 Հայոց հերոսական էպոսի, Սասունցի Դավթի երկու պատումները՝ Շատախի և Վանի (գրառողներ՝ Շահեն Կուժիկյան և Արտաշես Բարսեղյան) տպագրվել են. տե՛ս «Սասնա ծռեր», հ. ա., Եր., 1936, էջ 701-720, 871-888:

հաղորդել իր իմացածը: Խնդիրն այստեղ ոչ միայն քանակի, այլև հեքիաթի ծավալի ու կառուցվածքի մեջ է: Վասպուրականի Կուռուպաշ գյուղացի, անգրագետ Ահարոն Ահարոնյանի պատմած հեքիաթը 10 տպագիր թերթ է⁷, Հայոց Չորի Հորոտենց գյուղի բնակիչ, անգրագետ Գրիգոր Բաղդասարյանի հաղորդածը նույնպես⁸:

Թե՛ նյութական և թե՛ հոգևոր արժեքների կրողը մարդն է: Սակայն, նյութականացած հոգևոր հարստությունը, տեղափոխվելով երկրից երկիր, կարող է գնվել և փրկվել. այսպես, 1915 թվականին, երբ ռուսական զորքը մտավ Վան, վանեցի Հովհաննես Հյուսյանի, Արմենակ Եկարյանի և Ռուբեն Հովնանյանի ջանքերով Աղթամարի և Վարագա վանքերից, Լիմ ու Կտուց անապատներից, Վանի քաղաքացիներից և շրջակա գյուղերից հավաքվեց և Էջմիածին ուղարկվեց 1473 հայկական ձեռագիր⁹:

Նույնը չի կարելի ասել բանավոր կերպով սերնդեսերունդ փոխանցվող հոգևոր արժեքների մասին. ժողովրդական բանավոր հարստության գանձերն իր բնօրրանում կերտող և կրող անհատների կորուստն անդառնալի է: Համեմատության կարգով նշենք, որ եթե Ռշտունիքի գավառի 26 գյուղերից գիտարշավի շրջանակներում ընդգրկվել են 22 -ը և գրառվել է 51 հեքիաթ, ապա Շատախի գավառի 57 հայաբնակ գյուղերից¹⁰ ներառված է եղել ընդամենը 7 ը: Սակայն Շատախի գավառից գրառված ավելի քան 80 հեքիաթների առյուծի բաժինը հաղորդել են երկու բանասաց՝ շատախցի Շամիկ (Շամամ) Մանուկյանը պատմել է 22 հեքիաթ, կաճեացի Կորո Շարոյանը՝ 16 հեքիաթ: Այս առումով Ե. Լալայանի խմբարշավն անգնահատելի ծառայություն է մատուցել հայագիտությանը՝ սերունդներին ժառանգություն թողնելով կորուսյալ հայրենիքի ո՛չ միայն հոգևոր հարստությունը, այլև անխուսափելի մոռացության վտանգից փրկելով նրանց անուններն ու հիշատակը, ովքեր գաղթի անմարդկային պայմաններում՝ սովի և համաճարակի ճիրաններում, հոգու անկարագրելի ուժ ու կրող ունեցան՝ ավանդելու բանահավաքներին հայ բանահյուսության գոհարները: Արժանին պետք է մատուցել Ե. Լալայանին և խմբարշավի մյուս բանահավաքներին, ովքեր չնայելով անբարենպաստ պայմաններին, վտանգի ենթարկելով սեփական կյանքը՝ անխոնջ ու եռանդուն, անսահմանորեն նվիրված իրենց գործին, աշխարհի անտարբեր աչքի առաջ նահատակվող, արնաքամ լիմող ժողովրդից կարողացան փրկել և սերունդներին փոխանցել հայ բանավոր գրականության անգնահատելի նմուշները:

Հեքիաթների տպագիր և ձեռագիր նմուշների քննությունը ցույց է տալիս, որ նրանց սյուժեներում նաև առկա են հայ ազգային կյանքին ու կենցաղին բնորոշ մի շարք հավատալիքներ, սովորություններ ու իրողություններ, որոնք մասամբ հայտնի են նաև այլ ազգագրական շրջաններից: Այսպես օրինակ՝ հայկական հեքիաթի սյուժեն սովորաբար եզրափակվում է «յոթն օր, յոթ գիշեր

7 Տես Դայ ժողովրդական հեքիաթներ (այսուհետ՝ ԴԺԳ), Խ.Մ.Վ (Վան-Վասպուրական), № 46, Եր., 1999, էջ 413 - 433:

8 Տես նույն տեղում, № 47, էջ 433 - 452:

9 Տես Ա. Ն. Մնացականյան, «Դայ ժողովրդի ողբերգությունը ռուս և համաշխարհային հասարակական մտքի գնահատմամբ», Եր., 1965, էջ 186: Ի դեպ Դովհաննես Հյուսյանն իր գրավոր գեկույցների մեջ նաև հաղորդել է, որ թուրքական զորքերը հավաքել են մնացած ձեռագրերը ու փոխադրել Կ. Պոլիս: Դրանց մեջ է եղել Վասպուրականում հռչակված 10-րդ դարի Նարեկը, որը գրված էր հենց իր՝ Գր. Նարեկացու ձեռքով (նույն տեղում, էջ 187) :

10 Տես Դայկական սովետական հանրագիտարան, Խ. 8, Եր., 1982, էջ 457:

հարսանիք արին» արտահայտությամբ, ինչն առնչվում է հայ ավանդական կենցաղում հարսանիքի յոթնօրյա ծիսակատարությանը: Առանձին խումբ են ներկայացնում հայ մարդու բարոյահոգեբանական կեցվածքում խորապես արմատավորված՝ երախտագիտության զգացումն արտացոլող հեքիաթները: Պետականության վեցդարյա կորուստը կարծես ստիպել է հայ մարդուն իր յուրատեսակ կարտուն ազգային պետության հանդեպ արտահայտել թագավորի իշխանության հարատևությունն արտահայտող և ապահովող «Թագավորն ապրած կենա», «Թախտոդ հաստատ կենա» բանաձևումներով: Մի շարք այլոթեններում առկա է մարդու՝ գայլի վերափոխվելու հավատալիքը, որը տարածված է հայկական ազգագրական տարբեր շրջաններում: Սա նշանակում է, որ հեքիաթներն ունեն պատմաճանաչողական հսկայական արժեք: Ե. Լալայանի խմբարշավի կողմից գրառված հեքիաթների այլոթենների հյուսվածքում տեղ են գտել նաև մեծ թվով տեղանուններ և անձնանուններ՝ մերձակա Արևմտյան Հայաստանին ու կիրառելի տեղի հայ բնակչության միջավայրում. **Ստամբոլ, Արաբստան, Բաղդադ, Մաքր, Հնդրստան, Չինումաչին, Արշակ, Կարապետ, Սարգիս, Վարդիկ, Գառնիկ ախպեր** և այլն: Մրանք հայկական հեքիաթի ազգային յուրահատկությունները ներկայացնող և ապահովող անվիճելի կովաններն են:

1958 թվականին, ՀԽՍՀ ԳԱ գրականության ինստիտուտի գիտական խորհուրդը, միանգամայն ճիշտ գնահատելով հեքիաթների պատմաճանաչողական, գիտական ու գեղարվեստական արժեքը, հայ ժողովրդական հեքիաթների վերաբերյալ ողջ ժառանգությունը հրատարակելու որոշում կայացրեց: Այդ կապակցությամբ նշվում էր. «Ներկա հրատարակությունը խթան կհանդիսանա հայկական հեքիաթների բազմակողմանի ուսումնասիրության համար, ինչպես նաև հարուստ նյութ կընձեռնի ազգագրության, պատմության, լեզվաբանության և մի շարք հետազոտողներին»¹¹:

Տասնամյակներ անց, հաշվի առնելով մասնագետ-բանագետների առկայությունն ու նյութական հնարավորությունների մակարդակը, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտը թեև դանդաղ քայլերով, այնուամենայնիվ շարունակում է մեծ բանահավաք Ե. Լալայանի սկսած գործը: Ցարդ լույս է տեսել Արևմտյան Հայաստանի վերաբերյալ Ե. Լալայանի արշավախմբի հավաքած հարուստ ժառանգության առյուծի բաժինը՝ 560 միավոր հեքիաթ, ութ հատորով՝ հ. IV (Կարին), հ. IX (Բագրևանդ (Ալաշկերտ, Մանազկերտ, Բաղեշ), հ. XI (Տուրուբերան-Հարք), հ. XII (Տուրուբերան-Մուշ), հ. XIII Տուրուբերան (Մուշ-Տարոն), հ. XIV, XV, XVI (Վան-Վասպուրական): Ներկայումս տպագրության են պատրաստվում ևս երկու հատոր (106 հեքիաթ՝ Մոկս և Ռշտունիք):

«Ազգագրական հանդեսի» լույսընծայման կապակցությամբ Երվանդ Լալայանը գրել է. «Եվ դեռ քանի քաղաքակրթության հուրը լափում է անցյալի բոլոր հիշատակները, մենք պետք է շտապենք հավաքելու ինչ որ դեռ մնացել է»¹²: Լալայանի խոսքերն առավել քան արդիական են. *մեր օրերում ևս փախստական-քոնսագաղթածներից նյութ հավաքելն ազգային-քաղաքական խնդիր է: Հոգևոր արժեքները ոչ միայն քաղաքակրթության հուրն է լափում,*

11 ՀԺՀ, հ. I (Այրարատ), Եր., 1959, էջ 6:

12 «Ազգագրական հանդես», գ. Ա, Շուշի, 1897, էջ 6:

այլ նաև մեր հարևան երկրներում մոլեզունդ ազգայնամոլությունը:

Երվանդ Լալայանի արշավախմբի կողմից գրառված բանահյուսական նյութերն անգնահատելի սկզբնաղբյուրներ են բոլոր սերունդների հետազոտողների համար: Ուստի, ներկա ու ապագա սերունդները պարտավոր են հիշել հայագիտության նվիրյալ Երվանդ Լալայանի և նրա գլխավորած խմբարշավի մասնակիցների՝ Եղեռնի ու բռնազաղթի ծանրագույն պայմաններում իրականացրած մեծ գործը:

Summary

Alvard S. Ghazinyan, Lilit E. Mkrtumyan

A HEROIC ATTEMPT TO SAVE THE WESTERN ARMENIAN SPIRITUAL TREASURES

On the expedition of Ervand Lalayan (September, 1915-March, 1916)

The article is devoted to the activities of the folkloric expeditions headed by the famous ethnographer-folklorist, archeologist, pedagogue and public figure, E. Lalayan, in the years between 1915 and 1916. In the course of these expeditions, the team has been able to interview Armenian refugees forcibly deported from different parts of Western Armenia and record rich and valuable ethnographic materials which greatly enrich the spiritual treasury of the Armenian culture.